



ՕՐԱԳԻՐ ԶՄԻՌՆԵՐԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԱՐԻԶԻ ԶՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԶՄԻՌՆԵՐԱՅ ԴԱՐԱԹ 8 ՍԵՊՏԵՄԲԵՐ

1873

ԹԻԻ 970

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ներկայ Սեպտեմբեր ամիսը Գաղղիոյ պատմութեան մէջ յիշատակաց արժանի ամիս մի պիտի լինի . զոր վերլուծեան ամիս պիտի անուանեն , կրտէ գաղղիական լրագիր մի : Քանզի վերջին պատերազմին 5000 միլիոն ֆրանք տուգանաց մնացեալ 250 միլիոնին վճարումն իւրորդ դրուելով , գերմանական զօրքը բոլորովին մեկնեցան ի գաղղիական հողէն :

Այս միջոցին Պէրլինի մէջ ժողովուրդը յաղթական կոթողին նաւակատեաց տոնախմբութիւնը մեծ ու փառաւոր հանդիսիւ կրկնատարէր : Այս կոթողին բարձրութիւնը 195 ոտնաչափի կրճատնի և որուն վերայ Բրուսիոյ վերջին տան ամաց մէջ ըրած նշանաւոր յայտնութիւններն նկարագրուած են : Այս մեծաշուք յիշատակարանը 2 միլիոն 275,000 ֆրանք արժեք է :

Յիշեալ ազգային տոնախմբութեան բարեպաշտ առթիւ Գերմանիոյ կայսրը , կրտէ Պէրլինէն հասած նամակ մի , գիւնի խմբի ի կենդանութիւն և ի բարօրութիւն ժողովուրդեան :

Խաղիոյ թաղաւորը ամիսս 5—17ին կրտաւոր էր ի վէճնա . ուր հաւանականորաբ արդէն հասած և տեսակցութիւն ըրած է Աւստրոհունգարիոյ կայսեր հետ : Վիքթոր—Էմանուէլ թագաւորը վէճնայէն ի Պէրլին պիտի երթայ յայցելութիւն Գերմանիոյ կայսեր : Լա Բեռլէֆֆաւսն օրագիրը կրտէ թէ այս ճանապարհորդութիւնը մեծ ու երեւելի եղելութիւն մըն է և կրտուգէ զմտերիմ յարաբերութիւններն ի մէջ իտալիոյ և Գերմանիոյ կառավարութեանց : Իսկ մեք կրտեմք թէ այս տեսակցութիւնը վաւերացումն է յարձակողական և սրտատանդական գաղտնի գաղտնակցութեան մի՛ զոր հասարակաց կարծիքը հաստատեալ կրճատարի ի մէջ իտալիոյ և Գերմանիոյ տէրութեանց : Դաշնակցութիւնը բնական է և փոխադարձ մեծածառ օգուտներ կրմատուցանէ յիշեալ երկու ազգաց , ի դիպուածի որ Գաղղիոյ հասարակա-

պետութիւնը Ս . Պապին աշխարհական իշխանութիւնը հռոմի մէջ վերահաստատելու փորձ փորձէ : Նմանապէս ի դիպուածի որ յիշեալ հասարակապետութիւնը Գերմանիոյ դէմ պատերազմ հրատարակէ , ի վրէժինդրութիւն իւր վերջին պարտութեանն :

Սպանիան կրտաւոր պիտի յեղափոխական խռովութեանց մէջ և համազգային պատերազմին վերջը՝ ըստ երևմանց , հեռի է տակաւին : Այս դժբաղդ երկրին նախարարաց նոր փոփոխութիւն մի ևս տեղի ունեցաւ , և մօսիւ Բասթըրը պաշտօնէից (մինիսթր) խորհրդոյն նախագահ և գործադիր իշխանութեան գլուխ անուանեցաւ : Տեսնենք թէ քանի ամիս կարող պիտի լինի իւր կրկին պաշտօնը վարելու :

Անգղիական օրագիրք կը հրատարակեն զպատճէնն աղերսագրոյն , զոր Լոնտոնի Անկլո—ծիւիշ Ասոսիէշըն ընկերութիւնը մատուցած է Պարսից Շահին , Նորին վեհափառութեան ի յիշեալ մայրաքաղաքն գանուած ժամանակը : Ահաւսիկ այս աղերսագրոյն թարգմանութիւնը :

Մարդասիրական հրամաններն զորս ձեր վեհափառութիւնը շատ անգամ տուած է ապահովեցնելու համար ձեր ամեն հաւատակաց զմի և նոյն արդարութեան երաշխաւորութիւնները , վստահութիւն կուտան մեզ թէ ձեր սովորական դիմութեանը նկատուելիք ազդեցիկ անուր զհետեւալ յայտարարութիւնն անհաւասարութեանց , որովք կը տուաւ պէն Պարսկաստանի հրէայք , և որք իրենց համար անբացատրելի թշուառութեանց և չարեաց պարբեր են :

1. Հրէից հասարակութիւններն ամբողջապէս և երաշխաւորութեամբ միմեանց՝ պատասխանատու են եղեւնութեանց և յանցանաց զորս անհասարաբ կը գործէ մի ոմն յանդամոց խրոյ :

2. Հրէի մը վկայութիւնը չընդունուի դատատանական ատենանց առջև :

3. Մահմէտականութիւնը ընդունող հրէայ մի՛ միայն ինքն կը ժառանգէ գերդատանին բոլոր ընչիցը , որոցմէ կը զրկուին միւս ամեն մօ-

տաւոր ազգականներն , որք ի մահմէտականութիւն չեն դարձած :

4. Ի բազում քաղաքս , հրէայք չեն կրնար խոնութ բանալ շուկայից մէջ :

5. Խղճի իրաւունքը կը բռնաբարին թողութիւն շնորհուելով օրինաւոր պատժոց և տուգանաց , այնու պայմանաւ որ եղեւնագործը կամ յանցաւորը զմահմէտական կրօնն ընդունի :

6. Բայ ի թաղաւորական օրինաւոր տուրքէ , տեղական իշխանութիւններն ըստ կամաց խրոյ տուրք կը պահանջեն և կուտուն ի հրէից :

7. Թէեւ հրէայք անուանական իրաւունքն ունին Արդարութեան բարձրագոյն ատենանին բողոքելու , բայց չեն համարձակիր ի գործ դնել այս իրաւունքը վախճալով ի վրէժինդրութեան ստորին դատարանաց :

8. Հրէից կեանքը բաւականապէս պաշտպանեալ է յօրինաց . քանզի հրէի մը սպաննողը կրնայ ազատիլ տուգանք մի վճարելով :

Այսպիսի զեղծումներն ուղղել հզօր , արդարաւոր և իմաստուն վեհապետի մը արժանի ձեռնարկութիւն մըն է . որոյ հակամիտութիւնն փան նորագոյն քաղաքակրթութեան ներշնչեց իրեն զփոխաքն ատենելոյ զերօրպան և նորա բարեկարգ հաստատութիւններն անձամբ քննելոյ , որպէսզի ի վերայ արձին փութացնէ իւր իրաւունքս զյայտ աշխարհութիւնն ազգային դատարարութեան :

Ձեր վեհափառութիւնն անշուշտ գիտէ թէ միջին դարուն մէջ , հրէից դէմ եղած նախապաշարումն այն աստիճան զօրաւոր էր , որ խաղցելացիներն չէին կրնար արդարութիւն գտնել սովորական դատարանաց առջև : Այս չարեաց գործնան անհետ համար , նոյն ժամանակին օրէնսդրաց բարեփոխութիւնն և մարդասիրութիւնն հաստատեցին մասնաւոր ատենաներ վառն հրէից , և հասարակութիւնը հետզհետէ սովորեցաւ այս բացառական իրաւասութեանը , ազգու գաս մի եղաւ իրեն թէ հրէան իրաւունք ունի արդարութեան առջև , ինչպէս ուրիշ ո՛ր և է մարդ մի : Եւ ըստ չափու տկա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ

ԸԼԸՃԵ

ԵՒ ԻՐ ՀԱՆՔԱՅԻՆ ԶՈՒՆԵՐԸ

Ա .

Ըրճա՛ պղծիներէ չըջապատեալ ծովեղբերաց պաշտան փորրիկ գեղ մըն է , որ հազիւ թէ երեսուն տունէ կը բաղկանայ , ու Չէճմէ և Ալաշաթա գիւղաքաղաքներէ մէջ տեղը կիցնայ :

Այկէ քսանհինգ տարի առաջ , այս գիւղը քանի մը որոմիկի հիւղերէ կը բաղկանար . ուր ճամբորդք վայրկեանական հանգստի համար կանգ կառնէին : Իսկ միւրի և Չէճմէ մէջ տեղ բանաղ ջրեղծանք՝ ծովէն քիչ մը անդին բոլորած հանքային ջուրերուն օգտակարութիւնը շրջաբերական հաղորդելով , վատառողջ զիւ զանգիւնդէն շատերը՝ այն օրէն սկսեալ յիշեալ ջուրերը մտնելու կերթային և առողջութիւնն ստանալով կրկնապատկան իրենց գիւղը : Սակաւ առ սակաւ բնակութեանց թիւը աւելնալով և իւր հանքաջրոց օգուտը տարածուելով , ճամբատանի ամեն կողմիւ , Եղիպտոսէն , Յունաստանէն և Ալքիպեղադոսի կղզիներէն իսկ , հիւանդներ սկսան հոն յաճախել : Այսպէս մի քանի տարուան մէջ , Ըրճայի համար իրաւաւոր ընդհանրանալով՝ ապաքինութեան համար հոն գիւղը ուղիորները պատասխարելու նպատակաւ , բաւական տուններ և սենեակներ շինուեցան : Զմեռը շատ չորաւ ընելուն մարդ չընակիր . բայց որովհետեւ օդը խիստ մաքուր և զիւրը աղւոր է , կը յու-

սացուի որ քիչ տունէն բնակչաց թիւը աւելնայ :

Տասնհերկու բաղանիք կայ հոս . որոց ջուրերը երեք տեսակի կը բաժնուին հետեւալ կերպիւ .

Ա . Հասարակ ջուրեր , որոց տարբութիւնը Բլոմբուրի Զերմաշափու 25 աստիճանի կը հասնին և ամենին հոս չունին :

Բ . Տղմուտ ջուրեր , որոնք պէտք են առնուիլ անկէ՛ ուսից կը զրկին , և որոց մօտը կիցնայ հանքային ջուրերուն մայր աղբիւրը :

Գ . Ծծմբային ջուրեր , որոց Զերմաշափու 24 աստիճանի կը հասնին և անին ծծմբային թանձր հոտ մը :

Այս ջուրերը կը ընկնեն այլեայլ հիւանդութիւններ . ինչպէս են չլային անգամաւրածութիւն , ոչ գոցուած խոցեր , լեարդի հիւանդութիւն , և այլն և այլն : Նմանապէս այս ջուրերը կրնան խմուիլ . որք մարտադական և շրջաբերական գործարաններու նպատակաւ են : Բայց մեր նպատակը հոս այս նիւթի վրայ խօսիլ չէ . վաճաղի բժշկական կողմը՝ այն արհեստին ծառայողներուն կը վերաբերի :

Ըրճա եթէ այսչափ համար ունեցաւ իւր հանքային ջրոց օգտակարութեան համար , այն ալ գլխաւորաբար կը պարտաւորի Եղիպտոսի Փոխարքային եղորորդի և փեսայ րարծրա . Թոտուն փաշային բժշկուելուն . որ իւր ծաղիկ հասակին մէջ ընդհանուր անդամաւրածութեան ենթակայ եղած էր : Հիշեալ իշխանագունը բժշկուեալ մասին՝ բոլոր բժշկաց ջանքերը ի դերեւ ելեր էին . բայց 1871 տարւոյն մէջ հանքային ջուրերուն օգտակարութեան լուրը աւելելուն պէս հոն կը լինէ : Առաջին օրերը ինչ-

պէս որ ևս ինքս աչքովս տեսայ , տղմուտ ջուրերը երթալ մտնելու համար երկու ձեռքերէն կը ընկնին , ըստ որում ամենին կարողութիւն չունէր : Հազիւ թէ 15 անգամի շափ առաւ այս ջուրերէն , մէյմալ նայիս որ առողջ մարդու մը պէս սկսաւ քալել , առանց գտաղաւնի կարօտութիւն զգալու ի գարմացումն ամենեցուն :

Հետեւալ տարին նորէն դարձաւ , և երկու ամիս հոն անցնելէ յետոյ , միկնեցաւ կատարելապէս առողջացած : Բայց դեռ ճամբայ չելած , ի նշան իւր դոհունակութեան աղբիւր մի շինել տուաւ՝ քսան բողէ հեռաւորութենէ ջուր բերել տալով . որուն նուազութեանը պատճառաւ , հիւանդք շատ նեղութիւն կը լինէին :

Այս անհատաւոր բժշկութեան վրայ Ըրճայի ջուրերուն համար օրըստօրէ տեղնալուն շատ նպաստեց : Հիշտ այս ամիսներուն մէջն է , որ Իսկուրէն , Ա . Պոլիսէն և Եղիպտոսէն բաղմոթիւ ընտանիք կ'սկսին հոն զիմել . անանկ որ շատ ժամանակ բնակութեանց թիւը պակսելով , շատերն երկու երեք օր վրաններու տակ բացօթեայ անցնել կը տարտաւորին , ինչպէս որ անցեալ տարի տեղի ունեցաւ . և կըսեն թէ այս տարի ալ Իսկուրէն երթողներուն թիւը այնչափ շատ է , որ մեծ նեղութիւն կը ընտան տարակոյց չկայ : Բայց այս անգամ գոհութեամբ օրտի կ'իմանամք , որ տեղեւոյ ընդհանուր կառավարիչ վեհմա . Սիւրէյա փաշան՝ որուն այս տեսակ բաներու վրայ ունեցած ջանքը և հոգը բոլոր իսկիւրցոցս յայտնի է , Վիլիս յիշին ճարտարապետը հոն զրկելու և մեծակա հիւրատուն մը շինել տալու զեղեցիկ գաղափարը երկներէ : որուն մէջ հարկաւրի չափ ընտանիք կ'որհնան պատասպար-

րանալուն ժողովրդական նախապաշարմանց և կրօնական անժուժութեան, այս մասնաւոր ատեաններուն հարկաւորութիւնն ևս նուազեցաւ և վերջապէս խափանուեցան:

Կաղաչեմք բազում ակնածութեամբ զվեհափառութիւն ձեր հիմնադրելի Պարսկաստան նոյն օրինակ դատաստանական ատեաններ և անոնց գոյութիւնը հաստատուն պահել մինչև որ ազգային դատարարականութիւնը իւր նպատակին հասած լինի, տպաւորելով ժողովրդեան մտաց մէջ զկրօնական թոյլատուութիւնն և զյարգութիւնն կրօնական ամեն գաղափարաց:

Բաց յայսմանէ կըհամարձակեմք խոնարհութեամբ ծանուցանել թէ Ձեր վեհափառութեան հրէայ հպատակներն, որք կըվճարեն այժմ զհարկն (վերին) տեղական իշխանութեանց, հարկապահանջութեան այս կերպին փոփոխութեան մէջ մեծ դիւրութիւն պիտի գտնեն, և որ ամենեւին քննա մի պիտի չպատճառէ կայսերական գանձուն, եթէ Ձեր վեհափառութեան յատուկ մէկ հրովարտական հրէից իւրաքանչիւր հասարակութեան վերայ խմբովին ձգուի հարկը, հումնատութեամբ անոր անդամաց թուոյն, և նոյն իսկ հասարակութիւնն պարտաւորի ժողովել զհարկն և կարող լինի անոր գումարը ուղղակի վճարել կայսերական գանձուն՝ յատուկ հարկապահանջի մը ձեռք առանց միջամտութեան տեղական իշխանութեան:

Վերջապէս, կաղաչեմք զվեհափառութիւն ձեր ծանուցանել կուսակալաց և նոցին ստորագրաւոր զթագաւորական այս հրաման ձեր, ինչպէս նաև զվաւրաքն զոր ունիք որպէսզի յետ այսորիկ ձեր տէրութեան բնակիչ հրէաներն նկատուին, ամեն բանի մէջ, իրեն հաւատարիմ հպատակք կայսերութեան և կարող լինին զբաղիլ, առանց որ և է արգելքի, իրենց սովորական գործքովը:

Օգոստոսիաւ Շահն իւր սիրելի նախարար վսեմա. հայկազուն Մեղքում խանին միջոյաւ, Էտեհեաւ պատասխանն տուաւ, որո արդէն հրատարակած եմք Ըրաւ-ար 967 թուոյն մէջ:

Ըստ հրամանի օգոստա. Շահին կըծանուցանեմ ձեզ զընդունելութիւնն յիշատակաբոյն ձերոյ, որով ընդհանրապէս պաշտպանութիւն և բարեարութիւն կըլինեմք վասն հրէից Պարսկաստանի: Նորին վեհափառութիւնն միշտ մարդասիրական խնամք ունեցաւ վասն բարեկեցութեան հպատակաց իւրոց՝ առանց խորութեան աստիճանի և կրօնի. հետեւաբար պիտի հսկէ, որպէսզի անխրաւութիւնք և ապօրինաւոր խտտութիւնք չի գործ չըրուին ընդդէմ

ուիլ և հանգստութեամբ ջուրերը մտնել: Մեր շնորհաւորութիւնը կըփութամք իսնիսա յոյտնել Ն. Վսեմութեան. ինչու որ քանի մը տարիէ ՚ի վեր հոն յաճախող ընտանիքները շատ նեղութիւն կըկրէին սենեակներու անբաւականութեան պատճառաւ. նմանապէս կրկին անգամ շնորհակալ եմք Նորին Վսեմութեան, որ Հասան և Սէյիտ Մէհմետ կոչուած անձերուն ծանկերէն պիտի խալընին կըթողնեն. որոնք ջուրերուն եղանակը մօտենալուն պէս, մէյմէկ բռնաւոր կըկտրուէին, և զըտնուած սենեակներուն և տուններուն համար, որ իրենց սեպական կալածանքն են, երբեմն այնպիսի տարօրինակ զինք կըպահանջէին, որ Եւրոպայի մէջ անգամ ըստած բան չէ:

Բ.

Ինչպէս որ ըսինք, եթէ կառավարութեան շնորհիւ այնպիսի հիւրասիրութիւն չլինուէր ըլլայ, անտարակոյս եմք որ քիչ ժամանակէն յուսացուածէն աւելի եկամուտ պիտի բերէ. որովհետև հիմնական գտնուած սենեակները՝ որ հազիւ թէ այս անուամբ կոչուելու արժանի են, ճամբորդները կըպարտաւորին իւրաքանչիւրին համար օրը 10 և շատ անգամ 20 զուրուշ վճարել. այնպիսի սենեակներով որոյ յատակը հողէ և դռները ու պատուհանները նախնի ժամանակներու ձևով շինուած են, և որոյ մէջ ընկալուող փոխանակ բժշկուելու, նորանոր հիւանդութիւններու կրնան ենթարկուիլ:

Երեսուելու հիւրասիրութիւն պիտի ունենայ նաև այն առաւելութիւնն, որուն մօտ գտնուած պարագ զետիւնները կրկնակի զին մը ստանալով և անոր ասոր ծախուելով մեծ վաստակ պիտի բերեն կառավարութեան: Ըլլճայի

հրէայ ժողովրդեան, զոր իրաւամբ կանուանէք հաւատարիմ, խաղաղասէր և ճարտարամիտ: Ն. վեհափառութիւնն իւր շնորհակալութիւնը կըմատուցանէ ձեզ վասն բարեմակութեանց զորս կրնէք իւր անձին համար:

(Ստորագրեալ:) ՄԵԼԻՔՈՒՄ ԽԱՆ

Կըհաւատեն թէ Բ. Դուռը զբաղեալէ այնպիսի խնդրոյ մի վրայօք, որ թուրքոյ առեւտրական և գանձային ապագային դիւրաւորօգտիցը կըվերաբերի, հետեւաբար մեծ կարեւորութիւն ունի: Այս խնդիրն է թուրքոյ ապրանքային վերայ ծանրացած հարկերն 8 ներքին տուրքը. որ ժամանակ առ ժամանակ կըլինեալ գարէ մեր ներքին առեւտուրը, ինչպէս նաև բնիկ ձեռագործ արուեստից վաստակները:

Այս տրոց ջնջուիլ կերպիւ իւրք պարունակեալ էր 1856 ամին Հաթիթի հիւմայունին մէջ. և այժմ յիշեալ ծանրակշիւ գործոյն վրայօք խորին քննութիւն և վիճաբանութիւն կըլինի տէրութեան նախարարաց մէջ, և ըստ երևմանց՝ յաջող վախճան մի պիտի ունենայ. այսինքն հարկերն 8 ներքին տուրքը պիտի ջնջուի:

— Հետեւեալ յօդուածէն կըտեսնեմք թէ մինչդեռ Յոյներն իրենց ժամանակը վաճառականութեան նուիրելով օգոստոսէ կըհարստանան ու երեւելի կըհանդիսանան, մեք խեղճ Հայքս ամեն տեղ և մանաւանդ ՚ի Կ. Պօլիս, ազգային կռիւներով զբաղեալ միշտ, չեմք զգար մեր աղքատութիւնը և գրեթէ մոռցած եմք թէ առանց դրամոյ բան մի յառաջ չերթար և ոչ իսկ Սահմանադրութիւնը:

«Երկու օրուան մէջ, կըսէ Լը Մէսժէ Գէ-Մէրքի օրագիրը, ցորեն բռնաւորեալ 144 մեծ նաւեր հասին ՚ի Մարսիլիա, Արեւելէն գալով: Յորեն հունձը այս տարի նուազ լինելով ՚ի Գաղղիա՝ ինչպէս նաև արեւմտեան Եւրոպոյ մեծ մասին մէջ, արմուրք մեծ քանակութեամբ կըհասնին մեզ Սև ծովուն եզերքէն: Մարսիլիայի Յոյն վաճառականները, որք կընես առեւտրական ընդարձակ գործքերովը երեւելի հանդիսացած են, բաղնիքի շոգեխաւեր վարձելով յուղարկեցին ՚ի թակարօք, յՕտէստ և ՚ի գետեզերս Դանուբի, ուսկից պիտի բերեն՝ իրենց գործակալներէն համբարուած արմուրքը:

«Գրեթէ ամիսէ մը ՚ի վեր այս առեւտուրէն շահուած ստակը անհաշուելի է: Միլիոններու կըհասնի մեր քաղաքին՝ այսինքն Մարսիլիայի Յոյն վաճառականաց ըրած շահը. որոց գլխաւորներն են՝ Սքարամանկային վաճառատունը, Ռօտօքանաքիին վաճառատունը, Ռալիին և Ար-

մէջ տուն շինելու փափաքը երթալով աւելնալու վրայ է: Արդէն յիշեալ գիւղին մէջ հինգ հատ մեծիկ տուններ շինուած են վայելուչ ձևով և այս օրերս վեցերորդ մ'ալ շինուելու վրայ է: Հետեւեալ գէպը օրինակ մը կրնայ ըլլալ, թէ ինչպէս վրայ գրած են գետինները քիչ առեւնէ ՚ի վեր: Չորս տարի կայ, որ Չէմէյի մը տասն տը տալար տեղ ծախու տուած էր 50 օսմանեան ոսկիի. շաբաթ մը յառաջ յիշեալ տեղը 250 ոսկիի ծախեց ուրիշ մը: Գետիններն ինչ արժէք պիտի ստանան արդեօք, երբ այսպիսի պանդոկի մը շինութեան ձեռնարկուելու ըլլայ: Բայց ըստ մեզ՝ Ըլլճայի համար ամեն բան առաջ, ամենէն կենսական խնդրը՝ ջուրի խնդիրն է: Իւրաւ, բարձրա. Թոսուն փաշան, ինչպէս ըսինք, անցեալ տարի բարեհաճեցաւ այս գիւղին մէջ աղբիւր մի շինել տալ իւր քսակէն, բայց բերուած ջուրը թի՛ աղի և թի՛ աղտոտ ըլլալուն ընդհանրապէս ճամբորդք ջրէնդ ջրի (տարնը) ջուր կըխմեն. բայց որովհետև աս ալ քիչ տեղէն կամ կըհասնի կամ կ'ապականի, այս պատճառաւ մարտի և յատկաւ ջուրը Քիտա կ'զրկեն բերել կուտան մեծ ծախքով:

Այնպէս կըհաւատեն թէ քաղաքապետական ժողովին ճարտարապետ մօսիւ Վիլիամըն, որ քանի մը տեղէն ՚ի վեր հոն կըգտնուի, կաշխատի եղբայր այս ջուրի նուազութեան դարման մը գտնել: Արդէն ջրհոր մի փորել տուել է ծովեզերեաց կողմը, որպէսզի անուշ ջուրի աղբիւր մը գտնէ. բայց չյուսացով որ յաջողի: Արդէն ՚ի գաւ Սրտէսեան ջրհոր մըն ալ փորել կուտայ եղբայր:

Ըլլճայի նաւահանգիստը բաւական ընդարձակ է, բայց ոչ այնչափ խորունկ. հետեւաբար մեծ նաւեր չեն

ժէնթիին վաճառատունքը: Միջնորդներուն գալով, շաբաթը մինչև 20,000 ֆրանք շահողներ կըգտնուին»:

ԱԶԳԱՅԻՆ

Կ. Պօլսոյ ազգային լրագրաց մէջ, Կեդրոնական հրաժարեալ և լուծեալ Գաղաքական ժողովոյն քանի մը անդամոց դէմ իրաւացի բողոքներ և գանդատներ կըլարդամք, որք երկար յօդուածովք բացատրեալ և ապացուցեալ են: Ասոնցմէ մէկ յօդուածը՝ Մարտի 1424 թիւէն քաղելով մեր ընթերցողաց աչաց առջև կըդնեմք՝ անոնց ուշադրութիւնը հրաւիրելով նոյն յօդուածոյն պարունակութեանը վերայ. զոր կարգաւորով՝ ողջամիտ հասարակութիւնը պիտի խմանայ, թէ Կ. Պօլսոյ Գաղաքական ժողովոյն քանի մը անդամներն՝ առանց մեծամասնութեան որոշումներ ընելով և հրահանգներ յուղարկելով՝ Սահմանադրութեան կէտաւէտ գործադրութիւնը կըպահանջէին դաւառաց մէջ, ուր խռովութեանց և յուղմանց պատճառ կըլինէին, ինչպէս և յղմիր մէջ երկպառակութիւնը երկարածաւելու առիթ եղան՝ անխոչեմ և անգործադրելի հրահանգներ տալով Պատրիարքական առժամանակեայ Տեղապահ սրբազան Հօր, որ հաշտարարութեան պաշտօնիւ առ մեզ յուղարկուած է:

Մինչդեռ գաւառաց և մասնաւորապէս իզմիրի վիճակին նկատմամբ այս անգործադրելի պահանջումն ունէին, Կեդրոնական Գաղաքական ժողովոյն վերոյիշեալ քանի մը անդամներն ՚ի Կ. Պօլիս զՍահմանադրութիւնն կէտ առ կէտ ՚ի գործ չընէին զատ, խաղաղի ըրած էին զայն իրենց կամաց և կրիցն և բռնանալ կուղէին Պատրիարքին, գաւառականաց և մանաւանդ զմիւսնաբնակ Հայ ժողովրդեան վերայ. բայց ներկայ լուսաւորեալ ժամանակիս մէջ չէին կրնար յաջողել և չյաջողեցան:

Ահաւասիկ Մարտի վերոյիշեալ յօդուածը:

Ստուգիւ չենք կրնար դարմանելու բռնել՝ երբ հրաժարեալ Գաղաքական ժողովոյ անդամոց ունեց Պատրիարքն ամբաստանելու յանձնապատան համար, ձեռնութիւնն իրենց հակասահմանադրական պաշտօնաւորութեան և ասորին ընթացիկ հետ կըբաղդատենք:

Գաղաքական ժողովոյ արձանագրութիւններէն կըտուգուի, որ Քաղ. և Խառն ժողովները՝ մինչև ներկայ տարւոյ Սպրիլի վերջը 66 նիստ ունեցեր են, որոց 43 առանց օրինաւոր մեծագոյն մասի ներկայութեան կա, տարուած են:

Սահմանադրութեան 40րդ յօդուածը կըսէ.

Կրնար ներս մտնել: Այս սխառտաւ իզմիրէն և այլ տեղերէ գացող ճամբորդները Չէմէ կըհանդիպին, և անկէց կամ ջուրով և կամ անսխառտ կառքով մը հոն կըհասնին: Ճամբան խորտուրորտ ըլլալուն՝ միայն երկու երեք կառք կըբանին. բայց աւելի աղէկ է ջուրի հեծնելը քան թէ կառք:

Եթէ այս ճամբան շինուելու ըլլայ, ո՛չ միայն քիչ ծախքի կըկարօտի, այլև այս երկու գիւղերուն յարաբերութիւնները կըզիւրանան և կըկանոնաւորուին:

Հիւրատան շինութեամբ բնականաբար ուղեւորներու թիւը աւելնալով, այն ժամանակ մէկ կամ երկու բժշկի պէտքը պիտի որ գապուի. որպէսզի ասոնք իրենց գիտութեան զօրութեամբ օգտակար ըլլան հիւանդաց և կարօտելոց:

Չէմէի տեղական կառավարութիւնը անցեալ տարի վայելչածն տուն մի շինեց, ուր տեղոյն գալմաղամը կուգայ և կըհաստատուի ջուրերու եղանակին, և հետեւ ալ զաղթիլներու խռմբ մը կըբերէ, որոնք ոտտիկա, նոսրեան պաշտօն կըվարեն: Նմանապէս հետագրաւ տուն մըն ալ կայ, որ տարւոյն միայն այս եղանակին կըբացուի:

Մէկ խօսքով, եթէ գործունեաց հսկողութեան մը ներքեւ դրուելով՝ յիշեալ հիւրատունը կանգնուելու ըլլայ, հաւաստի եմք որ Ըլլճա՝ իւր հանքային ախտաբոյժ և օգտակար ջուրերուն շնորհիւ մեծ անուն պիտի ստանայ և քիչ տեղէն պիտի պայծառանայ այն գիւղը՝ որ ասկէ քսան և քսանհինգ տարի առաջ անբնակ և անմայր տեղ մըն էր:

Տ. Գ.

Իզմիր, Յունիս 1873:

«Երբ Քաղաքական ժողովոյ հրաժարական տուող կամ ուրիշ պատճառաւ պակտող անդամոց թիւն երեքի հասնի, անոնց տեղ ուրիշ անդամներ կը նախարարին Ընդհանուր ժողովով: Բայց միեւնի, որ այս քննարկիւնն ըլլայ, Քաղաքական ժողովոյ մէջ բոլոր անդամոց մեծագոյն մասը կը լինուորի»:

88րդ յօդուածն ալ այսպէս կը տարաւորէ.

«Խառն ժողովոյ մէջ քննուած որեւէ խնդրոյ որոշում տրուելու համար, պէտք է որ երկու ժողովները զատ քուէարկութիւն ընեն: Խառն ժողովը օրինաւորապէս ղեկավարուած համարուելու համար, պէտք է որ ժողովոյ մէջ երկու քիւն ալ մեծագոյն մասը ներկայ գտնուին»:

Սահմանադրութեան այս ամենակարեւոր յօդուածն ըրնաւ յարգուած չեն ներկայ վարչութիւնէն:

Քաղ. ժողովոյ ամբողջութիւնը, ինչպէս յայտնի է, 14 անդամէ բաղկացեալ ըլլալով, մեծագոյն մասը 8 էր, և առանց այս ծին ներկայութեան ոչ առեան պէտք էր բացուիլ և ոչ որոշում ըլլալ:

Սահմանադրութիւնները կը ղեկեն, որ Քաղաքական և Խառն ժողովներն ընդ ամենը 21 նիստ ունենցեն և մեծագոյն մասն ներկայութեամբ, իսկ 43 նիստ առանց մեծամասնութեան կատարեն են:

Սակեւ զատ, Քաղաքական և Խառն ժողովոյ անդամք առանց զատ զատ մեծագոյն մաս ունենալու և առանց զատ զատ քուէարկութիւն ընելու խնդիրներ լուծեն և որոշումներ ըրեն են:

Սահմանադրութեան ոգւոյն և սկզբանց եղծիչ ասկէց ակնի մեծ և աննեղելի ապօրինաւորութիւն կրնայ ըլլալ ընթերցողոյ կը թողնեն դատել:

Եւ ասկայն Քաղ. ժողովոյ հրաժարեալ անդամք Սահմանադրութեան նոյն իսկ հիմնական սկզբունքը լուծած և իրենց պաշտօնն այսպէս ապօրինութեամբ վարած ժամանակին, ազգը խաբելու համար անդադար կը յղուին զին և մինչև այսօր կը համարձակին յեղեղել թէ ներկայ Սահմանադրութիւնը կէտ առ կէտ գործադրելի է, և վերաբնութեան պէտք չունի:

Եւ որ առաւել զարմանալին է, երկրորդական և երրորդական կէտերու վրայ Պատրիարքին դէմ վճի կը յայտարարեն և զայն Սահմանադրութեան կէտ առ կէտ գործադրութեան ընդլայնող և հակասահմանադրական կամքատուան են:

Այս ասոր կըսեն ուղիները կընել և միջոցները քածել:

Ս. Պատրիարքն իր գահակալութեան օրէն անկեղծաբար յայտարարեց ի լուր ազգին թէ ներկայ Սահմանադրութեան սկզբունքն և ոգւոյն միայն կրնայ հաւատարմութիւն ունենալ, և մինչև այսօր իւր խօսքին վերայ անյողող կենալով՝ քանիցս առաջարկած է երեսփոխանական ժողովոյ, որ Սահմանադրութիւնը ժամ առ ժամ վերաբնելով ազգին կենսական պիտոյից պատասխանելու և ճշդիւ գործադրելի ըլլալու վիճակի մէջ դնէ, որպէսզի ինքն ալ կարող ըլլայ անոր կէտ առ կէտ գործադրութեան հսկել:

Իսկ Քաղաքական ժողովոյ հրաժարեալ անդամք, ընդհակառակն իրենց հրապարակաւ տուած խոստման հակառակ վարուած և ազգը խաբած են:

Ս. Պատրիարքն 1872 Յունիս 2ի ընդհանուր ժողովոյ մէջ հետեւեալ յայտարարութիւններն ըրած է:

«Անցեալ օր Կրօնական էֆէնտի լաւ խօսեցաւ որ եւ թէ Հայոց համար կառավարութեան օրէնք մը կայ, «Սահմանադրութիւնն է այն. պէտք է որ ժողովը կամ Սահմանադրապէս ընթանայ, կամ բոլորովին դադրէ»: Եւ այն օրը՝ որ դիմ Պատրիարք ընտրեցիք, իբրեւ մարգարէ զգայի թէ այս Սահմանադրութեան օրէնքը անքննելի տաւ և կէտ գործադրել անհնարին է. անոր համար ոգւոյն և սկզբանց վրայ ուստեցի, և նոյն ուստեցի համեմատ շատ մը յօդուածներ Սահմանադրապէս չեն գործադրուած. եթէ ճշդիւ կէտ առ կէտ գործադրութիւն կը պահանջէք, պէտք է որ դուք ալ երգէ՛ք մամբ ապահովեցէ՛ք դիմ. մինչև հիմա եղած խոտորումներն ուղղէք և ամեն կէտի մէջ ճշգրտութիւն գործածէք: որպէսզի անպատեհ բողոքներու վերջ տրուի: Բայց դուք չեմ գիտեր թէ կարող էք այդ երգումն ընել. եթէ կարող էք, Պատրիարքն ալ կրնայ հսկել Սահմանադրութեան կէտ առ կէտ գործադրութեան»:

Գարնաւալ.

«Եթէ Սահմանադրութեան հսկող Հայոց Պատրիարքն է, ձեռքս տուէք որ հսկեմ. մինչև որ այս Սահմանադրութիւնը կէտ առ կէտ գործադրուի համար երգում չպահանջէք՝ անկարելի է որ քուէարկութիւն ընէք. եթէ Հայոց Պատրիարքը երգում ընէ Սահմանադրութիւնը կէտ առ կէտ գործադրուի, պէտք է որ Երեսփոխանք ալ նոյն երգումն ընեն»:

Ազգն ու երեսփոխանութիւնը Ս. Պատրիարքին այս յայտարարութիւնները լսած են և դիտեն, և այս գիտնալով Պատրիարք ճանչցած և ընդունած են զայն չորս տարիէ ի վեր. և որ առաւել է, երեսփոխանութիւնը ներկայ Սահմանադրութեան ինչ ինչ տրամադրութեանց անգործադրելի ըլլալը ճանչելով, վերաբնեւած և փոփոխած է զանոնք, և այսպէս իրաւունք տուած է Ս. Պատրիարքին ի սկզբանէ մինչև այսօր ըրած յայտարարութեանց:

Իսկ Քաղաքական ժողովոյ հրաժարեալ անդամք, իրենց ընտրութեան միջոցին՝ ներկայ վարչական կողմնութեան եղանակն ընդհանուր ժողովոյ մէջ ուղիով չափ պաշտօնակէ հասն, երբս վարչութեան ղեկին անցան և անգործադրելի ըլլալը փորձով անտան, և իսկական իրենց աննախատեսութիւնն ու անխորձութիւնը խոստովանելով երեսփոխանութեան ղեկեւոր, Սահմանադրութեան հիմնական սկզբունքն իսկ եղծանելու ձեռք դրելին՝ առանց մեծամասնութեան նիստեր ընելով և ծանր ու փափուկ խնդիրներ որոշելով, և իրենց այս ապօրինութիւնը ծածկելու համար՝ Կրօնական ժողովն ալ իրենց օժանդակ և գործակից ըրին՝ շարունակ Խառն ժողով կազմելով, և քաղաքական և կրօնական խնդիրներն իրարու հետ շփոթելով:

Ս. Պատրիարքն առաջարկեց երեսփոխանական ժողովոյ, որ Քաղաքական ժողովն հանրական խնդրոց ըզբաղելու և տեսուչ խորհրդոց վրայ լաւ հսկողութիւն ընելու համար՝ տեղական և զաւտական մասնաւոր խնդրոց քննութեան համար երկու մասնաժողով սահմանուին: Հասկողք երեսփոխանական ժողովը Ս. Պատրիարքին այս առաջարկութիւնն օրինաւոր դտնելով ընդունեց և նախորդ վարչութիւնն ալ գործադրեց: Իսկ ներկայ հրաժարեալ ժողովը չգործադրեց այս որոշումը թէ և իր ընտրուած ժամանակ, այն է՝ ընդհանուր ժողովոյ 1872 Յունիս 16ի նստին մէջ առաջարկուեցաւ իսկ որ տեղական և զաւտական մասնաժողովներ տեսուչ խորհրդոց կարգն անցնին, և ընտրելի Քաղաքական ժողովն ալ ազատութիւն տրուեցաւ այս երկու նոր խորհուրդները կազմելու: Բայց Քաղաքական ժողովը մոտիկ չըրաւ, ընդհանուր տեսչութեան պաշտօնով դո՛ւ չեղաւ, այլ ամեն մանրամասնութեանց մէջ ձեռք ունենալուց, և այս եղաւ ոչ միայն Ս. Պատրիարքին և Քաղաքական ժողովոյ, ինչպէս նաեւ տեսուչ խորհրդոց և Քաղաքական ժողովոյ մէջ ծագած անհամաձայնութեանց, այլ մայրաքաղաքիս և զաւտաց մէջ շարունակեալ յուզմանց, վրդովմանց, խռովութեանց և վերջապէս Պատրիարքարանի մէջ կատարուած վերջին ողբալի անկարգութեանց պատճառը:

Մարտի 10-ուստի 1420 թուոյն մէջ հետեւեալ կը կարդաւ.

«Լրագրական տեսչութեան դիւանէն մեզ հաղորդուած պաշտօնական աղբարարութիւնն մը կը ընդհանուրանէ թէ անձնականի և կրօնականի գլխոց և պաշտօնէից դէմ յարձակողական յօդուածներ չհրատարակելու մասին ասկէ առաջ լրագրաց արտօնատէրներուն երկիցս պատուէր ըլլալէ ետեւ, Հայրենիք լրագիրն իւր 160րդ թիւ թերթին մէջ դարձեալ անձանց ոմանց և կրօնական գլխոց և պաշտօնէից դէմ խել մը սուտ ու սխալ զրոյցներ հրատարակած ըլլալով, վերջին անգամ իմաց կը տրուի իրեն, որ եթէ այսուհետեւ այնպիսի հրատարակութիւն մի տեսնուի իւր թերթին մէջ, կանոնական պատիժն անմիջապէս ի գործ պիտի դրուի»:

Գաղղիայ լրագրի մը մէջ հետեւեալ հետաքրքրական և ծիծաղաշարժ պատմութիւնը կը կարդաւ. «յորմէ կըտեսնուի թէ լծակցական փոխադարձ սեղը՝ դժբաղդ սքաւոր, հազուադէպ է ամեն տեղ և ընկերութեւ ամեն դասուց մէջ»:

Պատրիարքանի մը կինն ինքզինքը խնձորենիի մը ճիւղէն կախելով անձնասպան կը լինի. (չիտացուի թէ պատճառը՝ սիրահարական յուսահատութիւնն էր թէ ուրիշ բան մի): Զիարդ և իցէ, այս տխուր դէպքին հետեւեալ օրը այրի մնացեալ պարտիզօսանն այցելութիւն մի կրնաւ դուռնի իւր դրացի պարտիզանէն որ կըսէ. սիրելի բարեկամ, եկի խնդրել ի՞նչէն պատուատ (աշ) մի այն խնձորենիէն, յորմէ կախուեցաւ և մեռաւ կինդ. — Ի՞նչ պիտի ընես, կը հարցնէ այրի պարտիզանը: Պիտի պատուատեմ, կը պատասխանէ, եւ խնձորէնիս տեսնելու համար

թէ արդեօք պիտի կրնամ ձեր քաղած ստուղն քաղելու բարեբաղդութիւնն ունենալ»:

ՄԵԼԵՂՈՅԺ



Յատիւ սրաիւ կը ընտանցանեմք թէ տիկին Բօղինա, դուստր հանգուցեալ Ս. Դոնատանի, որ թաղիցն էր քաղաքիս Պարսից հիւպատոսարանին գլխանադպիր (քանչէր) և առաջին թարգման մեծաբոյ Պօլ. Արքայրեան Յովհաննէս էֆէնտիին, զինի՝ երկարատե հիւանդութեմը, անցեալ ամսոյ 25ին առ Աստուած փոխեցաւ իւր ծագիկ հասակին մէջ, անմխիթար տրտմութեան մէջ ձգելով իւր բոլոր ազգականները: Բնութեամբ աղնիւ և աշխոյժ, չքնաղ և ուսումնասէր, տիկին Արքայրեանն իւր խանդակով լծակցին երջանկութիւնն և իւր աղնուական ընտանեաց ուրախութիւնն էր: Բայց դժբաղդարար ամենայն ինչ անցաւոր է ի կենցաղում: Հանգուցելոյն յուղարկուորութեան տխուր հանգէն ի հետեւեալ աւուրն փառաւորապէս կատարեցաւ:

ԱԶԳԱՅԻՆ ԽՈՒՈՎՈՒԹԻՒՆՔ Ի ԿՈՍՏԱՆՅՆԱՊՈԼԻՍ

Ըստ թախանձական արեւշահայ ազգային երեսփոխանական ժողովոյն, ամենա. Խորիման Ս. Պատրիարք Հայրենի վճառ իւր հրաժարականն ետ առնելու, այնու պայմանաւ որ Սահմանադրութեան անգործադրելի յօդուածներն, որոց դէմ կը զանգատի Դորին Սրբաշնութիւնն, ազգային ընդհանուր ժողովոյն ներկայացնէ չուտով որպէսզի նոյա տրամադրութիւններն փոխուին: Կընայ այժմ՝ նոր Քաղաքական ժողովոյն անգամայն ընտրութիւն. զոր՝ ըստ մեզ, լուսաւոյն կը լինի Ս. Պատրիարքին խոհեմութեամբ յանձնել, ինչպէս որ յանձնուեցաւ նախընթաց տարիներն. ապա թէ ոչ՝ տարածայնութիւնն անպակտ պիտի լինի միշտ, Պատրիարքին և Քաղաքական ժողովոյն մէջ:

Յու ի սրտ կը տեսնեմք թէ Կ. Պօլսոյ մէջ ազգային գործքերը խաղաղիկ եղած են քանի մը կուսակցութեանց անհնաւան կրիցն. որք Սահմանադրութեան, ազատութեան ու ազգային անհատական իրաւանց պատրուակին ներքեւ բոնութիւն կը քանդեն ազգին և ազգային երեսփոխանական ժողովոյն վերայ, ու անխելանութիւն կը զարգացնեն և հաստատուն կը պահեն զրգուշով գծողութեան կուսակցութեանց միոյն կամ միւսոյն դէմ: Երկխոսութիւն, որ յաւուր միւսմպիտի կործանէ զՍահմանադրութիւնն և ազգային գործքերը՝ Բ. Կրօն հսկողութեամբ տեսնուելու պատճառ պիտի լինի:

Չափաւանցութիւն չէ միւր այս դրուցածը. որ կը հաստատուի Օրագրին հետեւեալ գայթակցական պատմութեամբը, զոր կընէ անցեալ ամսոյ 26ին ի Մայր եկեղեցին զուարճուած երեսփոխանական ժողովոյն համար: Գիտե՛ք արժան է որ այս թերթին խմբագիր տէր մեծա. Խօսաւորեան Օգոստէն էֆէնտին՝ ազգային երեսփոխան է:

«Երբ ետին պաշտած էին Բերայի և Մայր եկեղեցւոյ թուրքականները: Այնեան էֆէնտի՝ որ դէմի կողմն էր, խօսքի սկսելուն պէս, ասոնք սկսան իբրեւ հրամայեալ զինուորներ՝ ժողովը ձեզքիւղ վիճակի կողմն անցնել խրոխտ ու սպառնական զիրքով վը. ասոր վրայ Այնեան էֆէնտի մեր կողմն անցաւ ու լսեց: Ո՞վ հրաւիրեց ասոնց որ զան ժողովաւորին և մեր կտին կենան. նաեւ ո՞վ հրամայեց որ Այնեան էֆէնտի խօսելու միջոցին ժողովը ձգքեն ու դէմի կողմն անցնին. . . »

«Այդ լինչ կընշանակեն այդ սպառնալից ժողովաւորանց դէմ գաղտնի ձեռքով պատրաստուիլն. ինչ կընշանակէ ասոնց շարժման լուսթեմը քաղաքներէն. ինչ կընշանակէ պարզ մարդիկը ժողովոյ սրահն դըժուարութեամբ առնելն ու թուրքականներուն դիւրութեամբ թողնել ներս մտնելն: Այժմ՝ են ասոնք. ցաւաւ ճանութիւն են ասոնք, վատութիւն են ասոնք. արդաւ կործանութիւն են ասոնք և ի մի բան վայրենի միապետութիւն: Ինչո՞ւ հրաւիրեցիք երեսփոխանները՝ եթէ չպիտի թողնէք ազատ վիճաբանելու. ինչ կողմէք ձեռք կենցնէ թուրքականներէն»:

Գարնան վերջին օրերին Օգոստոս 28 թուոյն մէջ հետեւեալ տողերը հրատարակեալ են :

«Արդատուն թէ՛ ուրախ օր (24 Օգոստոս) ընդհանուր ժողովոյն մէջ բերացի արիւնդուշտ Յոյնի աշ բերուած են եղեր : Արդատուն նաեւ թէ՛ բերացի եւս աւարձի Պետրոս անուն անձը՝ անցեալ ուրախ օրուան ընդհանուր ժողովոյ սրահը եկող բերացի թուրմուրս ճինեղուն հրամանատարութիւն է ըրեր» :

—Մասիսը՝ իւր թուոյն մէջ որ ի 25 Օգոստոս կը գրէ : «Արեւելք թէ՛ երկուան ընդհանուր ժողովոյ ներկայ գտնուող ժողովուրդը՝ Կեցցէ՛ խորմեան» պողոտայած ժամանակ, Հայրենիքի և Մամլոյ խորագրերն են և Ղալաթիոյ վարժարանի բերականութեան դասատուն «Չենք ուզեր խորմեանը» գոչեր են, և քիչ մնացեր է որ հակաժողովրդական այս ցոյցին պատճառաւ խռովութիւն մը պիտի ելնէր, եթէ խոհական անձինք չմիջամտէին :

Արեւելք նախընթաց թուոյն գրած էինք թէ «Մեր գերաւոր Պատրիարքական Տեղապահ սրբազանը համադեալ կերեւի թէ անհրաժեշտ հարկ կայ ճանաչել զՅանձնաժողովն ազգովին ընտրեալ իւրեւ ընտրողական ժողով, և նորա միջոցաւ և իւր նախագահութեամբ ձեռք դարձնել վիճակիս երեսփոխանական ընտրութեանը ըստ Սահմանադրութեան» :

Իրաց այս ազգօգուտ երեւումը ի դերեւելուն, և մեր առժամանակեայ հոգեւոր Հայկեր հաշտարար միջոցներու գեւա ձեռնարկ չեղելու հետեւաբար քաղաքիս ազգային երկպառակութիւնը՝ թէ և հանդարտութեամբ, բայց դժբաղդ աբար կը շարունակուի ի մեծ քննա ազգային դործոյ : Սակայն Նորին Սրբազնութիւնը, եթէ իրեն առաջնորդ ունենայ զխաղաղաբնէր սկզբունքն և խոհմութիւնը, կրնայ յաշտել ազգայնաւ երկպառակութիւնը դադարեցնել և անոր տեղ եկրայրսիրութիւն հաստատել :

Բայց այս աբարում և ձախող կացութիւնը երկարածը երբեք հարկաւ ինքն պատասխանատու պիտի լինի ազգային անկարգութեանց և խռովութեանց, որոց կրնայ տեսարան լինել մեր քաղաքն ևս, ինչպէս որ եղած է կոտորածներու պօլիս : Գոնցի կրակը միտքոյ ներքեւ ծածկուած կրտսնեմը առայժմ, զոր քիչ օրէն անհուշտ պիտի փոխկցնէ մեր առժամանակեայ Տեղապահին յառաւորութիւնը :

ՁԱՆԱԶԱՆ ԽՈՒՐԵՐ

Զմիռնիա 8, Ապրիլեմբեր :

Անցեալ շաբաթ հրդեհ մի պատահելով ի Պուռնովա, բոլոր շուկայն հրոյ ճարակ բրտ : քանզի միայն մէկ հրդեհաշիջոց ջրացան գործի (թուրմուրս) կը գտնուի ի յիշեալ գիւղէ : Հետեւաբար չէր կրնար մեծ օգնութիւն մի բնել կրակին մարելուն : Կրտսի թէ այս հրդեհին պատճառաւ վնասը 20,000 լիւրայի կը հասնի : որոց երրորդ մասը միայն ապահովեալ էր :

—Իտալիոյ օսմանեան դեպքան վե : Սարգիս Էֆենտի, որ շարաթէ մը ի վեր բնականօք հանդերձ մեր քաղաքը կը գտնուի ուր իւր բարձր աստիճանին համեմատ յորդական և սիրալիր ընդունելութեամբ մեծարեցաւ, կարծեմք թէ կը մեկնի այսօր ի Կ. Պոլիս վերադառնալու : ուսկից ի Հոռոմ պիտի երթայ իւր գեւադանական պաշտօնը շարունակելու համար :

—Ռուսիոյ օգոստաւորաւ Աղէքսանդր կայսեր անուան տօնախմբութիւնն անցեալ ամսոյ 30ին սովորական հանդիսիս կատարեցաւ ի հիւրաւորութեան քաղաքիս : որոյ դրան ճակատն և բերկոյն կազմով լուսաւորեցաւ փառաւորապէս :

—Աստորոհունդարիոյ զրահաւոր ֆուտկաթը լիսա կոչուած, 8—10 օր մեր նաւահանգիստը մնայէ ետեւ, անցեալ կիրակի օրը մեկնեցաւ :

—Օգոստաւորաւ Սուլթանին հրամանագրով, փեմա՝ Նուսր փաշան, որ Եգիպտոսի խափութեան արտաքին դործոց պաշտօնեայ է, բարձրացաւ յաստիճան Միւշիքի կայսերութիւն :

Միւշիքի աստիճանը շնորհուեցաւ վսեմա՝ Խամայիլ Սաաք փաշային, որ Եգիպտոսի գանձուց պաշտօնեայ է :

—Եգիպտական կառավարութիւնը ծխախոտին, այսինքն թիւթիւնն և թէնպէքին վերոյ՝ օխային 20 շուրուշ տուրք դրաւ, և այս

տուրքը պիտի առնուի ներկայ տարւոյս Սեպտեմբերի 10էն սկսեալ ամեն տեսակ ծխախոտէն, որ յեգիպտոս պիտի մտնէ, երկրին մէջ սպառուելու համար :

—Արտաքին դործոց պաշտօնեայ վսեմա՝ Բաշիա փաշան, որ ի իւրեմ գնացած էր վեհաճարին ի Լիվաւիա գալը շնորհուեցաւ համար ի կողմանէ օգոստաւոր Սուլթանին, ալդէն վերադարձաւ ի Կ. Պոլիս Ռուսիոյ օգոստաւոր կայսերէն մարգարական պաշիւ և սրբոյն Աննայի շքանշանն ընդունելով :

—Վսեմա՝ Օննիկ պէյ Մարմարէն, որ վեհաճարի Սուլթանին տեղանաւորն է, Սանիէ—Միւշիքի մայրիկ աստիճանաւ պատուեցաւ :

—Կայսերական վեհաճարութեան կողմանէ Օսմանի կարգին առաջին աստիճանի շքանշանը շնորհուեցաւ վսեմա՝ Պիամարք իշխանին : որ ինչպէս յայտնի է, Գերմանիոյ կայսերութեան առաջին նախարարն է :

—Պարսից օգոստաւոր Դահն իւր տէրութեան հողը կոխելուն պէս, առաջին գործն եղաւ ըզՄիւշիքի Հիւսէին խանը որ Սատրապամ էր, իւր պաշտօնէն հանել : Յայտնի է թէ Սատրապամը ուղեկից եղած էր Դահն, ի ճանապարհորդութեան իւրում յերրոպա : ուր գուցէ դժգոհութեան պատճառ մի առած է :

—Պարսից Դահն ի Կ. Պոլիս գտնուած ժամուանկը Շիրի—Խուրշիդի կարգին զանազան աստիճանի շքանշաններ շնորհեց Բ. Դրան գլխաւոր պաշտօնատարաց ոմանց : որոց մէջ հետեւեալ հայկազուն պաշտօնատարներն կը գտնուին : Վսեմա՝ Սարգիս պէյ Պալեան, կայսերական ճարտարապետ, որ յիշեալ կարգին երկրորդ աստիճանի շքանշանաւ պատուեցաւ :

Իտալիոյ օսմանեան դեպքան վսեմա՝ Սարգիս Էֆենտի, որ միւշիքի շքանշանաւ պատուեցաւ : Կ. Պոլսոյ առեւտրական երրորդ աստիճանի նախագահ մեծաշուք Յովհաննէս Էֆենտի Սուրէնեան, որ Շիրի—Խուրշիդի երրորդ աստիճանի շքանշանն ընկալաւ :

Մեծ Եգարդ ունի առաջին թարգման մեծաշուք Աղարեան Էֆենտի, որ յիշեալ կարգին չորրորդ աստիճանի շքանշանն ընկալաւ :

—Օգոստաւորաւ Սուլթանն ևս այլեւայլ կարգի շքանշաններով պատուեց Դահն ուղեկից եղող գլխաւոր պաշտօնատարներն : որոց մէջ կը գտնուի վսեմա՝ Մեքրուտ խանն՝ Վէնայի Պարսից նորընտիր դեսպանն, որուն Մեքրուտի կարգին առաջին աստիճանի շքանշանն շնորհեցաւ : —Փարսիցէն կը շնանուցանեն թէ նոյն մայրաքաղաքին Արքեպիսկոպոսին հրատարակած հովուական մէկ նամակը՝ որով իտալիոյ թագաւորին դէմ՝ կը յարձակի, խորին տալաւորութիւն ըրաւ ամենայն ուրեք : Հասարակապետական կառավարութիւնն արդիւնք զիջեցական թափօրն որ այսօր տեղի պիտի ունենար փարսիցի մէջ ի հակալիշատակ գրաւման և տիրապետութեան Հոռոմի ի զօրաց իտալիոյ :

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ

Բամպակը կուգուի և դիւրաւ առած է, ի վերուէն հասած յաջող լոյց պատճառաւ : Հետեւաբար գինը քիչ մը բարձրացան : Մեքրուտ մարքում լաւ տեսակի բամպակը 440—445 շուրուշի վաճառեցաւ կենդիւնարն :

Աֆիօնի գիներն հաստատուն են միշտ և այս շաբթու 40 կազմի չափ վաճառեցաւ : Հասարակ աֆիօնը 210 շուրուշի չէքին և Դառահիսարի ու երբեք կոչուած նոր աֆիօնը 215—217 ի իսկ Պաղատը 226 շուրուշի :

Քեօքսոյայի Պաթորի տեսակը 208 շուրուշի վաճառեցաւ կենդիւնարն :

ԾԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԻՒԹԱՐԵԱՆ ՎԱՐՄԱՐԱՆ Ի ԶՄԻՌՆԻԱ

Կըացուի ի 10 Սեպտ. ըստ նոր առւմարի :

Վարժարանը բոլակաւոր, կիսարդակաւոր և արտաքին աշակերտեց կը գնդուցի :

Աս վարժարանի մէջ հետեւեալ լեզուներն ու գիտութիւններն կը սովորեցուին : Հայ լեզու ու մատենա-

գրութիւն, տաճիկերէն, գաղղիերէն, գերմաներէն, իտալերէն, յունարէն, անգղիարէն, ճարտարագիտութիւն, ուսողութիւն (բուսաբանութիւն, այնպիսա, երկրաչափութիւն), աշխարհագրութիւն, ընդհանուր պատմութիւն, բնական պատմութիւն (կենդանաբանութիւն, տնկաբանութիւն, հանքաբանութիւն), երկրափոսութիւն, բնագիտութիւն (Ֆիզիկա), կրկնատաճար հաշուականութիւն, առեւտրական հարկաւոր նախաճանօրութիւն, գեղագրութիւն, գծագրութիւն :

Անգրագոյն գիտեցաւ համար վարժարանին տեսչութեանը դիմելու է, փողոց Եւեհի մահալէ, քիւ 89 :

ՀԻՒԱՆԳԻՆ ԲԱՐԵԿԱՍԵՐ



ԴԵՂԱՆՏՏՔ ՀՈՂՈՅԻՒՆ

ԶԱՆՅԱՆ ՀԻՒԱՆԳՈՒԹԻՒՆԷ

Մարդոց ջղային դրութեան (սթիք) շատ յոգնած ըլլալ տակաւ արտ մըն է և ջղեբուն ամենափոքրիկ շարժումը կամ դրութեանը վշտալի է յոյժ : Վսեմ գի ուր գտնուելու է անոր դիւր : —Միակ դեղը այս է : քիչ խմէ գինի, գարեջուր, և ողկէ ըմպելիք : և աւելի աղէկ կըլլայ որ բոլորովին հեռանաւ անոնցմ, և ամենին լիմա : Նմանապէս խաչիւ մի խմէր, և անոր տեղ թէթիւ թէթիւ (չա) գոհ եղիր : Վարել եղածին չափ մաքուր օդ ծծէ ամեն փշեր իմ դեղահատեղեւ երբեք կամ շուր հաս կըլլէ, շատ միս կեր և համեմունք (սոլա) հեռու կեցիր : Եթէ այս օգտակար կանոնները ճշգրտութեամբ ի գործ դնելու ըլլա, միտքը շուտով պիտի հանգստանայ, մարմինը առողջ պիտի ըլլայ և պիտի մոռնաս թէ ջղաց շարժումն ունեցար :

ԱՆԿԱՐԳՈՒԹԻՒՆԷ ԵՐԻԿԱՄԱՆՑ

Այս գործարանաց վերաբերեալ ամեն հիւանդութեանց մէջ թէ կըլլանք չափէն աւելի ջրալից կըլլան կամ բաւական չեն ըլլա : Եթէ բարեկամ ազգը երկամանց կը հասնին, կամ թէ անոնց մեջցաւ կը գոյնան մեջքին համապատասխանաւ մասը : Այս ամեն հիւանդութեանց ժամանակը պէտք է Հոլլուէի դեղահատեղեւ աւելու տակաւ հրահանգաց համեմատ և անոր սպեղանիով լցվել երկկամանց վարի կողմը անկողին մտնելու ժամանակը : Այս դարմանը անմիջական օգնութիւն մի պիտի մատուցանէ, այնինչ որ թէ դեղերը դուր տեղը գործածուած պիտի ըլլան :

ՍՏԱՄՈՒՄԻ ԱՐԻՈՒՆԸ

Ար և Է դեղ մը չկրնար ստանալ զօրութեանը նորոգել աղէկցնել զայն շուտով ինչպէս այս դեղահատեղեւ : որոնք անբարեխաւսութեան կամ վատթար կերակուրէ պատճառաւ բոլոր թիւթուութիւնը կըլլան և կը հասնին ի լեւորն (սթիք) : որուն գործողութիւնը կը կարգադրեն : ջղեբուն սաստիկ ձգանք (սթիք) դեպքերու մէջ սրանցէլ ներգործութիւն մի ունի և լեւոր ու ստանալ ամեն անկարգութիւնները միշտ կը բժշկէ :

ԲՈՐՈՒԹՈՒՄԻ ԹՈՒԲԵՐԱԶՈՅ (ԴԵՂԱՆՏՏՔ) ՀԱՉԻ ԵՒ ՀԱՐՈՒՂԻՍ

Հնչաւութեան վերաբերեալ գործարանաց հիւանդութիւնը ամեն արտուն աւելի յաճախ կը պատահի և երբեմն աւելի վատ դուր է : Ասոնց գործողութեանց անկարգ ընթացքին աւարտելու շնորհիւ կրնան միշտ կարգադրուիլ Հոլլուէի հրահանգար դեղը հատեղ միջոցաւ : Ասոնք շուտով կը դարմանան արեւմտ և և աստիճանական անշարժութիւնը, կը թէթիւ ցնեն խոցած շնչափնիքը, և կը բարեխաւսան շնչաւութեան սաստիկ արագութեանը և կորուցութեան կուտան շնչափնիքն ու թորեւոր գիւրութեամբ ու արեւմտաբար գործելու : Այս դեղահատեղեւ իրենց մարդկային գործութեանը կը սրեն արեւմտ ամեն աղտոգրութիւններէն, և այս եղանակաւ կը զօրացնեն զգրութիւնը (սթիք) ընդհանր ծիւրական արտին, շնչադրութեան, և ուրիշ թորային տկարութեանց :

ՏԻՒԼԱՆԵԱՆ ՄԱՐԿԱՆՆԱՅԵՍ ԲԱՆԿԱՑՈՒԹԻՒՆԷ

Տկարութեան, թուրութեան և ջղացաւութեան գեղեքերու մէջ, որոնք որ և է բնական կամ գերբնական չափազանցութեան յառաջ եկած են, այս դեղահատեղեւ այլալիշ և նորոգիչ ներգործութիւնը մեծապէս օգտակար է : քանզի մարդկութիւնը կը վաճառատուան, մարմնային ամեն հիւանդութեանը կը կանոնաւորէ, ջղային դրութիւնը կը զօրացնէ, հիւանդին միտքը կը յարգարէ և վերապէս առողջութիւնը ձեռք կը բերէ :

Հոլլուէի դեղահատեղեւ ամեն օգտակար դեղերն են հետեւեալ հիւանդութեանց համար :

Հնչալութիւն, Զօրացաւութիւն, Թորացաւութիւն,	Մաթալիս արտ, Տեսաւստութիւն, Զար որովայնի,
Խիթ (սթիք), Զրգրութիւն, Միւշիքի լեւորութիւն,	Հարբութիւն, Անարարութիւն, Բարբութիւն,
Ծիւրական արտ, Գալութիւն, Արտ ընկալաց,	Թուր (սթիք), Բարբութիւն արտ, Անարարութիւնը կոր,
Խոլ պարանոցի, Գար կամ թիւ միգա-	նանց, Միւշիքի հիւանդութիւն,
Վերնութիւն, Նոցի, Միւշիքի հիւանդութիւն,	Լեւոր հիւանդութիւնը Գլխացաւութիւն, Թիւր,
Փողոցաւ, Լիւրիքի տեսակ արտ, Խոցողութիւն :	

Գիտել արժան է որ տակաւ հրահանգներ կան ամեն լեզուով որոցմ մէկ հատ կը գտնուի իւրաքանչիւր տուեմէ մէջ ի տեղեկութիւն հիւանդաց, ամեն պարագայից մէջ :

Այս դեղահատեղեւ, որ կըլլան լեւորութեան բժշկին անհաւան վերատեսչութեամբ, կը վաճառուի իւր գործարանը ի Լիւնտոն : Օրաքօրու կոչուած փողոց թիւ 533, ի գին 1 և 1/2 շեքլին, 2 1/2 և 4 1/2 շեքլին տուիք, ըստ մեծութեան ամից :

ԽՈՒՐԱԳԻՐ—ՄԵՐ ԼՐԱԳՐՈՅ

ԴՆԻՍ Գ. ՊԱՆԴԱԳՐԱՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐԵՄԼՈՒՍՈՅ ՍՐԱԲԱՏԱՆԵ